ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.7. Տարաբնակեցումը և դրա ձևերը

1. Ծանոթ եք նաև «աշխատանքի հասարակական բաժանում» հասկացությանը: Հիշենք, որ սա աշխատանքի բաժանումն է հասարակության տարբեր շերտերի միջև: Առաջին բաժանումը տեղի ունեցավ հավաքչությունից հողագործության և որսորդությունից անասնապահության առանձնացման ժամանակ:

2. Բայց այն բնակչության թվաքանակի շատ մեծ տատանումներ է տալիս 200 բնակչից մինչև 40000: Այսպես, սկանդինավյան երկրներում, Դանիայում, Իսլանդիայում քաղաք են համարում 200-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերը, ԱՄՆ-ում՝ 2,5 հզ., Չինաստանում՝ 3 հզ. և ավելի բնակիչ ունեցող, ՌԴ-ում՝ 12 հզ., Կորեայի Հանրապետությունում և Ճապոնիայում՝ 30-40 հզ. բնակիչ ունեցող բնակավայրերը: Քաղաքի համար ընդունված չափանիշներից մեկը բնակչության զբաղվածության կառուցվածքն է: Քաղաք է համարվում այն համեմատաբար խոշոր բնակավայրը, որի բնակչության 2/3-ը աշխատում է ոչ գյուղատնտեսական ոլորտներում:

XX դարի երկրորդ կեսից քաղաքային ագլոմերացիաներում նկատվում է բնակավայրերի յուրահատուկ մասնագիտացում: Խոշոր քաղաքների շուրջը առաջ են գալիս ննջարանային, գիտական, հանգստի և այլ կենտրոններ:

Յուրաքանչյուր քաղաք, ինչպես և մարդը, ունի իր դեմքն ու դիմագիծը, իր զարգացման կենսագրությունը, գործառույթները: Օրինակ՝ խոշոր քաղաքները կատարում են մի քանի գործառույթ (արդյունաբերական, վարչաքաղաքական, գիտամշակութային, ֆինանսական, առողջարանային, նավահանգստային և այլն): Փոքր քաղաքներն աչքի են ընկնում մեկ կամ երկու գործառույթով: Օրինակ՝ տրանսպորտային (Սուեզ), վարչաքաղաքական (Կանբերա, Բրազիլիա), մշակութային, այդ թվում՝ համալսարանական (Քեմբրիջ, Օքսֆորդ), կրոնական (Էջմիածին, Երուսաղեմ, Վատիկան, Մեքքա), առողջարանային (Սոչի, Նիցցա, Ջերմուկ): Կան նաև տեխնոպոլիսներ և տեխնոպարկեր: